ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2016 թ.

№ 11 (996)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 51 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, ՀԱՅԱՍՏԱ՛Ն

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնը նախևառաջ պատմություն է հայ ժողովրդի զավակների հերոսական պայքարի, հայ մարդու ստեղծագործ մտքի, արարման թռիչքի, անկոտրում կամքի ու անսասան հավատի մասին: Դա պատմություն է քրիստոնեական, հոգևոր-մշակութային դարավոր արժեքները սերնդեսերունդ փոխանցելու ավանդույթների, արժանապատիվ ու քաղաքակիրթ ապրելու իրավունքը սեփական արյամբ ու կամքով վաստակելու մասին:

Անկախության տոնը ողջ հայ ժողովրդի հույսերից ծնված Հայաստանն է և նրա զարգացմանն ու առաջընթացին ուղղված մեր բոլոր ջանքերը:

Անկախությունը մենք ենք՝ բարեկեցիկ ներկային ու երջանիկ ապագային միտված մեր ճիգ ու ձգտումներով հանդերձ:

Շնորհավոր տոնդ, Անկախ Հայաստան: Թող որ Եռագույնդ միշտ ծածանվի անամպ երկնքում, թող որ բոլոր գարուններդ բացվեն լուսավոր ու պայծառ արշալույսների խաղաղ ծփանքի ներքո, թող զավակներիդ դեմքին հար ծաղկի բարօրության ու հույսի ժպիտը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Մանկավարժական համալսարանի շուրջ 1200 առաջին կուրսեցիներ սեպտեմբերի 16-ին մեծ մանկավարժ Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում երդվեցին հավատարիմ լինել ուսուցչի կոչմանը:

Միջոցառմանը ներկա էր ՀՀ ԱԺ և ՀՊՄՀ խորհրդի նախագահ Գալուստ Սահակյանը:

«Ձեր խնդիրն այսօր լավ սովորելն է, իսկ մեր պետության համար կարևորագույն խնդիրներից մեկը լավ աշխատող ունենալն է, -ասաց Գալուստ Սահակյանը:-Դուք այսօր խոստանում եք այդ ամենի մասին և պետք է կարողանաք այդ խոստումը պահել մինչև վերջ»: Խոստում տալը հեշտ է, կատարելը դժվար: Դուք այդ ճանապարհն անցնելու եք Մանկավարժական համալսարանում, որն ամեն տարի էլ ավելի է կատարելագործվում՝ հարթելով ձեզ սպասվող դժվարին ուղին»:

Շնորհավորելով ուսանողներին՝ համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը նկատեց, որ այսօր նրանք դառնում են աբովյանցիների ավանդական մեծ ընտանիքի անդամներ: Կարևորելով մանկավարժի մասնագիտությունը՝ ռեկտորն ընդգծեց, որ ուսանողական տարիները լի են իմաստությամբ, քանզի հենց այդ ժամանակահատվածում է ձեռք բերվում գիտելիքների հսկայական պաշար: Ռեկտորը հորդորեց ուսանողներին լավ սովորել և հետագայում՝ դպրոցում աշխատելիս, հավատարիմ մնալ ազգային դպրոցի լավագույն ավանդույթներին»:

➤ 2

Աշխատանքային այց Բելառուսի պետական մանկավարժական համալսարան

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն աշխատանքային այցով եղավ Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանում:

Պատվիրակության կազմում էին նաև Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան Արմինե Ավագյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ղեկավար Դավիթ Սարգսյանը:

Այցի ընթացքում Ռուբեն Միրզախանյանին ընդունել է Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ալեքսանդր Ժուկը: Հանդիպման ընթացքում ՀՊՄՀ-ի ռեկտորն անդրադարձել է Հայաստանում կրթական համակարգի որոշ ասպեկտներին, ինչպես նաև ընդգծել իր անկեղծ հիացմունքը բելառուս ժողովրդի հանդեպ:

«Տարբեր ոլորտներում երկու բուհերի միջև համագործակցությունը պետք է դրվի նոր մակարդակի վրա: Մեր ցանկությունն է, որ հայ և բելառուս ուսանողների ու շրջանավարտների մոտ մեր ընդհանուր գործի հանդեպ լինի սեփականության և հպարտության զգացում»,- հանդիպման ընթացքում նշել է Ռուբեն Միրզախանյանը:

Այցի ընթացքում ՀՊՄՀ-ի պատվիրակները շրջել են համալսարանում, ծանոթացել բուհի մասնաշենքերին, այցելել հազվագյուտ գրքերի դահլիճ, բուհի թանգարան, սպորտային դահլիճ:

Հյուրընկալող բուհում Ռուբեն Միրզախանյանը հանդես է եկել «Հայաստանի կրթական համակարգը. անցյալը, ներկան և ապագան» թեմայով դասախոսությամբ: Ներկաները հետաքրքրվել են հայկական կրթական համակարգի պատմությամբ, հիացել մեր երկրի ազգային մշակույթով, որն առաջիններից է միացել Բոլոնյան կրթական գործընթացին, բայց պահպանել է իր ավանդույթներն ու կրթական համակարգի յուրահատկությունները:

Բելառուս գործընկերներին առանձնակի հետաքրքրվել է նաև Մանկավարժական համալսարանում հիմնական մասնագիտությունից բացի շախմատ դասավանդելու արտոնագիր ստանալու փաստը: Հանդիպման ընթացքում վեր են հանվել նաև ժամանակակից մանկավարժական կրթության այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են ուսանողների պրակտիկայի կազմակերպումը, մանկավարժի մասնագիտության վարկի բարձրացումը և կրթական

➤ 3

Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը՝ Մոսկվայում

Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի ղեկավարությամբ սեպտեմբերի 22-27-ը աշխատանքային այցով եղավ Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանում: Պատվիրակության կազմում էին Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը, Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ինգա Սարկիսյանը, Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ղեկավար Դավիթ Սարգսյանը:

Հանդիպման առաջին օրը ռուս գործընկերները ներկայացրին համալսարանի գործունեության հիմնական ուղղությունները, մանկավարժության և տարբեր առարկաների դասավանդման մեթոդիկաների նորարարությունները, աշխատանքի ռազմավարական ուղղությունները և ուսուցման նոր տեխնոլոգիաները:

Այցի ընթացքում Ռուբեն Միրզախանյանը հանդես եկավ «Հայաստանի կրթական համակարգը. անցյալը, ներկան և ապագան» թեմայով դասախոսությամբ: Ռուբեն Միրզախանյանը և ՄՄՊՀ-ի ռեկտոր Ալեքսանդր Սեմյոնովը քննարկեցին երկու համալսարանների համագործակցության վերաբերյալ արդի հիմնախնդիրներ, նախանշվեցին նոր նախագծեր և պլաններ:

ՀՊՄՀ-ի պատվիրակությունը հանդիպեցին բուհի համապատասխան ինստիտուտների ղեկավար և դասախոսական կազմի հետ: Պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը ռուս գործընկերներին ներկայացրեց Գեղարվեստական կրթության և Դիզայնի և դեկրատի-կիրառական արվեստի ամբիոնի աշխատանքները և ուղղությունները, ինչպես նաև կիրառական արվեստի զարգացման հեռանկարները:

Նա ներկայացրեց հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի առանձնահատկությունները, նոր ուղղությունները: Ռուս գործընկերները նեկայացրին իրենց փորձը՝ ցուցադրական նյութերով և համակարգչային տեխնոլոգիաներով: Այնուհետև, Անուշ Եղիազարյանը հանդես եկավ հայկական գոբելենների մասին զեկուցումով:

ՀՊՄՀ-ի պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի Արվեստի ինստիտուտի կողմից արժանացավ պատվավոր պրոֆեսորի կոչման:

Հանդիպման ընթացքում նախանշվեցին ՄՄՊՀ-ի Արվեստի ինստիտուտի և ՀՊՄՀ-ի Գեղարվես-

➤ 3

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

➢1 Առաջին կուրսեցիներին ողջունեց նաև Աժ պատգամավոր, ՀՊՄՀ խորհրդի անդամ և շրջանավարտ Ռուզաննա Մուրադյանը: Պատգամավորը վստահեցրեց, որ ներկաները ընտրել են շնորհակալ և պատվաբեր մասնագիտություն:

«Մաղթում եմ, որ ձեր ուսումնառության տարիներին հավատարիմ մնաք Մաշտոցի ուխտի զինվորը լինելու գաղափարին, այս պահից ձեր ուսերին է դրվելու մեր երկրի քաղաքացիների կրթման և դաստիարակությանը գործը: Նորանկախ Հայաստանի սիրելի՛ մանկավարժներ, ձեզ է վստահված Հայաստանը հզորացելու, ուժեղացնելու և նրա սահմաններից դուրս հայ քաղաքացու կերպարը բարձր պահելու պատիվը, թող ձեր ոտնամուտը բարի լինի»,- ասաց Ռուզաննա Մուրադյանը:

Շնորհավորանքի խոսք ասաց Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը. «Դուք աշխարհի ամենահարուստ և խելացի սերունդն ենք, ամենահարուստ, որովհետև ձերն է աշխարհի ամենամեծ գանձը՝ ժամանակը, ձեր ինքնությունը պարզելու, ձեր անհատականությունը դրսևորելու, մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու փայլուն ժամանակը: Ամենախելացին, որովհետև մասնագիտական ճիշտ ընտրություն եք կատարել: Մարդկության դարավոր փորձը սերունդներին փոխանցող, հասարակության զարգացումն ու կյանքը և բոլոր մասնագիտությունների շարունակականությունը ապահովող, մեծերին կրթող, բայց խիստ համեստ և պարզ ուսուցչի մասնագիտությունը»: Դեկանը վստահեցրեց, որ նրանք ապահով ձեռքերում են՝ Մանկավարժական համալսարանի ամուր և հուսալի, բայցև զգայուն ու նուրբ, հոգատար ձեռքերում:

«Դուք այսօր ոտք եք դնում մի ուրիշ աշխարհ՝ շատ հետաքրքիր և սիրելի, այստեղ ձեռք կբերեք ոչ միայն գիտելիքներ, այլև լավ ընկերներ, նաև կկարողանաք օգտակար լինել ձեր հայրենիքին: Եղեք հաստատակամ, ամուր և գնահատեք գիտելիքի արժեքը, քանզի այն ձեզ պետք է գալու ողջ կյանքի ընթացքում: Դուք պետք է հետևողական լինեք ձեր կրթությանն ու ինքնակրթությանը»,- ասաց ՀՀ վաստակավոր արտիստ, Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի վարիչ, ՀՊՄՀ շրջանավարտ Արա Գևորգյանը:

Ուսանողներին ողջունեց և ուսումնառության ողջ ընթացքում հաջողություն մաղթեց նաև բուհի ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը:

Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստալրագրության բաժնի առաջին կուրսի ուսանող Առաքել Տոնոյանը հպարտ է, որ դարձել է Մանկավարժական համալսարանի ուսանող. «Օրը խորհրդանշական և հուզիչ է ինձ համար, հենց այսօր ես զգացի, որ ՀՊՄՀ ուսանող եմ: Շատ մեծ ակնկալիքներ ունեմ համալսարանից, կարծում եմ, որ բուհը կարող է տալ այն գիտելիքները, որոնք կօգնեն ինձ դառնալ ոլորտի առաջատար մասնագետ»:

«Ամեն ինչ կանեմ, որ բարձր պահեմ իմ ընտրած մասնագիտության պատիվը: Համալսարանական առաջին օրերի ընթացքում համոզվեցինք՝ համալսարանն արել է ամեն ինչ, որ մենք մեզ զգանք ապահով և հարմարավետ»,- ասաց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողուհի Աննա Ամիրյանը:

Ուսանողները միաձայն նկատում են՝ Մանկավարժական համալսարանում ստեղծված են լավ մասնագետ դառնալու բոլոր պայմանները, իսկ կրթական նոր ինտերակտիվ համակարգը թույլ է տալիս առավել արդյունավետ օգտագործել ժամանակը:

«Երդվում եմ, Ուսուցչապե՛տ, քո անունը կրող դպրության շեմից ներս մտնելուց առաջ ունկնդիր լինել դարերի կանչին, պահապանը դառնալ հայոց գիրուգրի». այս տողերով էլ ապագա մանկավարժները երդվեցին և հավատարմագրվեցին ուսուցիչների հզոր բանակին:

Երդմնառության միջոցառումը շարունակվեց գեղեցիկ համերգային ծրագրով:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՈՐՀՐԴՈՎ

Բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսեցիները օրն սկսեցին հանդիսավոր արարողությամբ:

Դեկան Աշոտ Գալստյանի կարծիքով այս տարի ֆակուլտետ ընդունվածների թիվը աստվածային է և խորհրդանշական:

77 առաջին կուրսեցիներին շնորհավորանքի խոսք հղեցին ֆակուլտետի դեկանը, ամբիոնների վարիչները, ուսանողական խորհրդի նախագահը, ավագ կուրսընկերները:

«Ուսուցիչը բարության, ազնվության և շռայլության անուն է, դուք պիտի տեր կանգնեք ուսուցչի այդ կոչմանը: Դարեր շարունակ գիտության լույսը սիրո և ակնածանքի խորհրդանիշ է եղել, սիրո և ակնածանքի խորհրդանիշ է եղել նաև ուսուցիչը: Նրան վստահել են ու հավատացել: Դուք եք լինելու այն կամուրջը, որ այս օրը կապելու է գալիքին»,- ասաց դեկանը՝ մաղթելով հաճելի օր և ուսումնառության լավագույն տարիներ:

«Դուք սովորելու եք շատ նորացված բուհում: Ձեզ դասավանդելու են հրաշալի դասախոսներ: Մնում է եռանդ ունենաք՝ այդ ամենը յուրացնելու»: Պրոֆեսորը առաջին կուրսեցիներին հիշեցրեց ֆրանսիացի հայագետի խոսքերը, ով զարմացել է, թե դարերով պետականություն չունեցող Հայաստանը ինչպես է պահել իր ազգային նկարագիրը. նա գոյատևել է ուսուցչի հանդեպ գոյություն ունեցող հարգանքի շնորհիվ: Դուք ապագայի կերտողներն եք», -ասաց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը:

Ուսանողներին շնորհավորեց և մաղթանքներ հղեց հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը. «Դուք ձգտում եք գիտության լույսին՝ փորձելով փոխել ձեր հոգևոր իմացական աշխարհը: Դեպի այս աշխարհը գալու ճանապարհն իսկապես ձեր կյանքի լավագույն ժամանակահատվածն է: Գիտելիքների աշխարհում ձեր տեղը գտնելու կարելիությունը հաստատեք ձեր մեջ: Բարով եք եկել և թող ձեր երդումը լինի ձեր գիտակից կյանքի առաջին քայլը»:

Ուսանողների նորամուտը Բանասիրական ֆակուլտետ շնորհավորեց նաև 4-րդ կուրսի ուսանողուհի Շուշան Ղուկասյանը և մաղթեց լավ սովորել ու դառնալ օրինակելի ուսուցչուհիներ:

Մինչ Քանաքեռի տուն-թանգարանում երդման արարողությանը մասնակցելը բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները ֆակուլտետի խորհրդանիշներով նարնջագույն վզպատներ են նվիրում առաջին կուրսեցիներին: Նարնջագույնը հայոց եռագույնի մի շողն է, որի վրա պատկերված է Բանասիրական ֆակուլտետի խորհրդանիշը:

Առաջին կուրսեցիների համար գրաբարի առաջին դասաժամին երդման խորհուրդն է բացում Հռիփսիմե վանքի վանահայր Հայր Համբարձումը: Նա հորդորում է լավ սովորել և երբեք չընկճվել դժվարությունների առաջ:

Օրն առջևում է, և օրվա խորհուրդը առաջին կուրսեցիների երդման արարողությունն է մի սրբազան վայրում, ուր մեծ մանկավարժ Խաչատուր Աբովյանի պատգամներն ու շունչն են թևածում տուն-թանգարանի համեստ ու խորախորհուրդ կամարների ներքո:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Աշխատանքային այց...

➢ 1 գործընթացի օպտիմալացումը:

Դասախոսության ավարտին մեծ հանդիսավորությամբ Ռուբեն Միրզախանյանին շնորհվել է Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի պատվավոր պրոֆեսորի դիպլոմ:

2014 թվականի «Ամառային դպրոց»-ի մասնակից ուսանողները շնորհակալություն հայտնեցին Ռուբեն Միրզախանյանին Հայաստանում ջերմ ընդունելության համար:

Դասախոսությունից հետո հայ պատվիրակների համար կազմակերպվել է հիշարժան էքսկուրսիոն ծրագիր. նրանք այցելել են Բելառուսի արվեստի ազգային թանգարան, Ազգային գրադարան և քաղաքի տեսարժան վայրեր:

Մանկավարժական...

➢ 1 տական կրթության ֆակուլտետի Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի համագործակցության հիմնական ուղղությունները:

ՀՊՄՀ-ի Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Իննա Սարկիսյանը հանդիպեց համալսարանի Բանասիրական ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմին, ծանոթացրեց ՀՀ-ում, ապա նաև ՀՊՄՀ-ում ռուսաց լեզվի դրվածքին, մասնավորապես նախանշեց խնդիրների շրջանակը, ինչպես նաև ներկայացրեց ՀՊՄՀ-ի ռուսաց լեզվի ամբիոնի հիմնական խնդիրները, ծանոթացավ Ինստիտուտի ծրագրերին, ուսումնական և մեթոդական ձեռնարկներին:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՀՊՄՀ-ի Օտար լեզուների ֆակուլտետի Ռուսաց լեզվի ամբիոնում ռուս մասնագետների հնարավոր աշխատանքի, հայ գործընկերների վերապատրաստումների մասին հարցերը:

Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի Ռուսաց լեզվի ամբիոնի աշխատակիցները նախանշեցին դասախոսության և վարպետության դասերի հիմնական թեմաները, որոնք կներկայացվեն առաջիկայում Հայաստան կատարած փոխադարձ այցի շրջանակներում:

Հանդիպման մասնակիցները նախանշեցին ՄՄՊՀ-ի Բանասիրական ինստիտուտի և ՀՊՄՀ-ի Օտար լեզուների ֆակուլտետի համագործակցության վերաբերյալ այլ հարցեր ևս:

Այցի շրջանակներում Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը ներկա գտնվեց Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ալեքսեյ Սեմյոնովի դասախոսությանը:

Աշխատանքային հանդիպում ունեցավ նաև Տեղեկատվական կենտրոնի ղեկավար Դավիթ Սարգսյանը, ով ռուս գործընկերների հետ միասին ծանոթացավ կաբելային և անլար կապի միջոցներին, դրանց հասանելիությանն ու կառավարմանը: Հանդիպման ընթացքում փորձի փոխանակման միջոցով նախանշվեցին ծրագրավորման ոլորտում համագործակցության, ներքին համակարգչային ցանցի կառուցման, քննարկման, կապի ծառայության ներդրման, ընթացիկ ծառայությունների ու սերվերային համակարգի անվտանգության հարցեր:

«Հայաստանը և հայերը լեհերի ընկալումներում»

Լեհ հայագետ, Լեհաստանի Պոզնան քաղաքի Անվտանգության հարցերի բարձրագույն դպրոցի ռեկտորի՝ միջազգային կապերի գծով ներկայացուցիչ Զբիգնև Շմուրլոնը Պատմության և իրավագիտության ֆակուլտետում հանդես եկավ «Հայաստանը և հայերը լեհերի ընկալումներում» թեմայով դասախոսությամբ:

Ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը վստահ է, որ նման դասախոսությունների միջոցով ուսանողները հնարավորություն կունենան իրենց դասախոսներից բացի լսել նաև այլ մասնագետների կարծիքները մեր երկրի մասին: Նման ձեռնարկների նպատակն է ոչ միայն ֆակուլտետի շուրջ համախմբել օտարազգի մասնագետների, այլև ստեղծել նոր կապեր և իրականացնել համատեղ նախաձեռնություններ:

Ուսանողների հետ հանդիպման ընթացքում հայագետն անդրադարձավ Լեհաստանի հայկական համայնքին, նրա գործունեությանը, խոսեց նաև Լեհաստանում հայկական հետքերի մասին: Լեհ հայագետը առաձնահատուկ կերպով ընդգծեց հայերի դերը լեհական համայնքում, նշելով, որ թագավորական մի շարք ընտանիքներ իրենց երեխաների համար վարձում էին հատուկ հայ ուսուցիչներ:

Բանախոսը հակիրճ ներկայացրեց նաև հայոց ցեղասպանությանը, արցախյան գոյամարտին և հայկական մշակույթին վերաբերող թեմաների մասին ընկալումները լեհական պատկերացումներում: Նա նշեց, որ ներկայումս հայկական սփյուռքը Լեհաստանում բաժանվում է երկու կարևոր հատվածի, Սփյուռք, որ պատմական է և որոշակի առումով լեհականացված, և համայնք, որ դեռ նոր է ձևավորվել՝ սկսած 1991թ. անկախության տարիներից: Հայագետի խոսքով հայերն ակտիվ ներգրավվածություն ունեն լեհական մշակութային կյանքում դեռ վաղնջական ժամանակներից և այսօր էլ այդ կյանքի անբաժան մասն են կազմում:

Եզրափակիչ խոսքում գիտնականը կոչով դիմեց հայ երիտասարդներին՝ ցանկացած ազգի ներկայացուցիչ պետք է սիրի իր պատմական հայրենիքն ու պատմությունը, այն միշտ պահի իր սրտում:

Դասախոսության ավարտին ելույթ ունեցավ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի վարիչ Աշոտ Փիլիպոսյանը: Կարևորելով նմանատիպ դասախոսությունների կազմակերպումը բուհում՝ ամբիոնի վարիչն ընդգծեց, որ դրանք նպաստում են միջազգային շփման ընդլայնմանը, նոր գիտելիքների ձեռքբերմանն ու նոր համագործակցության զարգացմանը:

Միջազգային գիտաժողով Ստեփանակերտում

Սեպտեմբերի 15-18-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սրտում՝ Ստեփանակերտում, կայացել է «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովը: Այն նվիրված էր Արցախի անկախության 25-րդ տարեդարձին և կազմակերպվել էր Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման կողմից:

Գիտաժողովին ներկա էին գիտնականներ Արցախից, Հայաստանից, Ռուսաստանից, Գերմանիայից, Լեհաստանից և այլ երկրներից:

Մեր համալսարանից գիտաժողովին մասնակցել են Պատմության և իրավագիտության ֆակուլտետի մագիստրոսներ Անի Խաչատրյանը, Մարինե Բեժանյանը, Մարիամ Ծատրյանը և բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Վերոնիկա Թորոսյանը:

Գիտաժողովի բացման արարողությանը ներկա է եղել նաև ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը: Բակո Սահակյանի խոսքով՝ նախաձեռնությունը նաև լավ հնարավորություն է Արցախյան հիմնախնդիրն ավելի խոր ուսումնասիրելու համար:

Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվել են իրավագիտության, քաղաքագիտության, պատմության, տնտեսագիտության և հոգեբանության բաժանմունքներում:

Գիտաժողովի մասնակիցները մասնակցել են Շուշիում կազմակերպված Արցախէքսոֆեստ «Երկրի համը» միջազգային փառատոնին, այցելել Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի:

Գիտաժողովի արդյունքների ամփոփումից և գիտաժողովի մասնակիցներին հավաստագրերի հանձնումից հետո գիտաժողովի մասնակիցներն ու հյուրերը մասնակցել են Արցախյան գինու երրորդ փառատոնին (Հադրութի շրջանի Տողի մելիքական ապարանք):

Սեպտեմբերի 18-ին գիտաժողովի մասնակիցները այցելել են Շուշիի Սբ. Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցի ու թանգարաններ:

«Շատ ուրախ եմ, որ հնարավորություն ունեցա մասնակիցը լինել մի գիտաժողովի, որն Արցախի անկախ պատմության մեջ իր ծավալներով և գիտնականների ներգրավվածությամբ անգերազանցելի էր»,- ասաց գիտաժողովի մասնակից Անի Խաչատրյանը:

ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Բագրատունյաց Հայաստանի անկումից 873 տարի և Կիլիկյան Հայաստանի անկումից 543 տարի անց, ինչպես նաև Հայոց ցեղասպանությունից 2-3 տարի անց՝ 1918 թ. մայիսին, հայ ժողովուրդը վերածնվեց կրկին՝ Մայիսյան հերոսամարտերում փառքով հաղթելով մեր դարավոր թշնամուն և Հայաստանի սուրբ հողի մեջ խորը մխրճելով Հայոց հավերժական պետականության անկոտրելի սյունը: 1918 թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը Նիկոլ Աղբալյանի ձեռամբ իրեն հռչակեց «հայկական գավառների միակ և գերագույն իշխանություն», իսկ արդեն մեկ տարի անց՝ 1919 թ. Մայիս 28-ին տոնվեց Հայաստանի Հանրապետության առաջին տարեդարձը:

1918 թ. հունիսի 7-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդն իր հերթական նիստում ՀՀ առաջին վարչապետ ընտրեց ՀՅԴ-ական կարկառուն գործիչ Հովհաննես Մաքնոսի Քաջազնունուն, ում էլ վերապահվեց ձևավորել կոալիցիոն կառավարություն, որը չստացվեց մի շարք պատճառներով, և նա ստիպված եղավ կազմել միակուսակցական կառավարություն, որտեղ միայն պաշտպանության և արդարադատության նախարարներն էին անկուսակցական: 1918 թ. օգոստոսի 1-ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում բացվեց ՀՀ առաջին գումարման խորհրդարանի անդրանիկ նիստը: Խորհրդարանի առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ առաջին սերնդի ներկայացուցիչ Ավետիք Սահակյանը, փոխնախագահներ՝ ընդդիմադիր ՀԺԿ-ական (Հայ ժողովրդական կուսակցություն) Գրիգոր Տեր-Խաչատրյանն ու ՍՀԿական (Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցություն) Դավիթ Զուբյանը, իսկ քարտուղար՝ անկուսակցական Պետրոս Զաքարյանը:

Հայոց խորհրդարանի շենքի մոտ տեղի ունեցավ զորահանդես, որն ընդունեց Հայաստանի առաջին ղեկավար Հովհաննես Քաջազնունին: Արդեն օգոստոսի 3-ին առաջին վարչապետը խորհրդարանի դատին հանձնեց իր կառավարության համեստ ծրագիրը՝ Հայաստանում տիրող իրավիճակը բնորոշելով իբրև «անձև քաոս և ավերակների կույտ»:

Այո, իսկապես ճիշտ բնորոշում էր և Հայաստանը զրոյից կառուցելու աներևակայելի ծանր պարտականություն էր դրվել Հովհաննես Քաջազնունու կառավարության ուսերին: Նրա կառավարությունում առանցքային դերակատարում ուներ Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայր, ներքին գործերի առաջին նախարար Արամ Մանուկյանը, ում հետ միասին էլ առաջին վարչապետը սկսեց վերաշինել նորանկախ Հանրապետությունը: Հարկ է նշել նաև, որ ՀՀ առաջին նախարարներն էին Ալեքսանդր Խատիսյանը (արտաքին գործերի), Խաչատուր Կարճիկյանը (ֆինանսների), Հովհաննես Հախվերդյանը (պաշտպանության) և Գրիգոր Տեր-Պետրոսյանը (արդարադատության): Հովհաննես Քաջազնունու առաջին կառավարությունն աշխատեց մինչև 1918 թ. նոյեմբերի 4-ը, քանզի հոկտեմբերի վերջին կառավարող ՀՅԴ-ի և ընդդիմադիր ՀԺԿ-ի միջև կնքվել էր կոալիցիոն համաձայնագիր և պետք է ձևավորվեր նոր կառավարություն, ինչն էլ տեղի ունեցավ նոյեմբերի 4-ին և Հովհաննես Քաջազնունուն կրկին հանձնարարվեց կազմել ՀՀ երկրորդ կառավարությունը՝ կոալիցիոն սկզբունքով: Տեղի ունեցան նախարարությունների միջև գործառութային վերաբաժանումներ, որոնց արդյունքում ստեղծվեցին նոր նախարարություններ (հանրային խնամատարության, հանրային կրթության և պարենավորման): ՀՀ քաղաքական պատմության մեջ առաջին կառավարող կոալիցիան գոյատևեց մինչև 1919 թ. հունիսի 4-ը, երբ ՀԺԿ-ն կամովին լքեց այն՝ հունիսի 21-23-ը Հանրապետությունում կայանալիք առաջին խորհրդարանական ընտրություններից մոտ երկու շաբաթ առաջ և հայտարարեց, որ չի մասնակցելու համապետական ընտրություններին: Այդուհանդերձ, խորհրդարանական ընտրությունները կայացան և հաղթեց Դաշնակցությունը՝ 80 պատգամավորական տեղ ունեցող ՀՀ երկրորդ գումարման խորհրդարանում ստանալով բացարձակ մեծամասնություն: Ընդդիմադիր կուսակցություններից խորհրդարան անցավ միայն ՍՀԿ-ն՝ ստանալով 4 պատգամավորական մանդատ: Պատգամավոր դարձան նաև Հայաստանի ամենամեծ ազգային փոքրամասնության՝ թուրք-թաթարների (ադրբեջանցիներ) 2 ներկայացուցիչներ և 1 անկուսակցական՝ Արագածոտնի անկուսակցական գյուղացիական միության համամասնական ցուցակից:

ՀՀ երկրորդ գումարման խորհրդարանի անդրանիկ նիստը բացվեց 1919 թ. օգոստոսի 1-ին և հեռակա կարգով խորհրդարանի երկրորդ նախագահ ընտրվեց Փարիզի հաշտության խորհրդաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը: Հայոց խորհրդարանի օգոստոսի 7-ի նիստում ՀՀ երկրորդ վարչապետ ընտրվեց փոխվարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, իսկ օգոստոսի 10-ին հաստատվեց Հանրապետության երրորդ կառավարության կազմը:

1919 թ. ամռանն արդեն ակնհայտ էր, որ Հայաստանը սկսել է կայուն զարգացում ապրել, քանզի վերականգնվում էր երկրի տնտեսությունը: Միջազգային ասպարեզում ևս սկսվել էին հանրապետության հաջողությունները: 1920 թ. հունվարի 19-ին Հայաստանը փաստացի ճանաչվեց Անտանտի անդամ պետությունների կողմից, ինչը մեծ շուքով նշվեց հանրապետությունում: Դրանից հետո քայլեր էին ձեռնարկվում ՀՀ «դե յուրե» ճանաչման համար, որն էլ իրականացավ 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում Առաջին աշխարհամարտում պարտված Օսմանյան կայսրության հետ ստորագրված հաշտության պայմանագրով, որում ՀՀ-ն նշված էր որպես Անտանտի անդամ ու հաղթող պետություն, և Ավետիս Ահարոնյանի կողմից այդ դաշնագրի ստորագրումով ու կնքումով Հայաստանն արդեն իրավական ճանաչում ստացավ իբրև միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ: Ի դեպ, կարևոր է նաև շեշտել, որ Կովկասից միայն Հայաստանն էր հրավիրված մասնակցելու Սևրի պայմանագրի ստորագրմանը: Հատկանշական է նաև այն, որ աշխարհի շատ երկրներում բացվեցին ՀՀ դեսպանություններն ու հյուպատոսությունները (Ֆինլանդիայից մինչև Եթովպիա և Ճապոնիայից մինչև Չիլի), որոնց թիվը 1920 թ.-ին զգալիորեն ավելացավ՝ հատելով 40-ի սահմանը: Տարբեր երկրներ դիվանագիտական ներկայացուցչություններ բացեցին Երևանում, օրինակ՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Իրանը (Պարսկաստան) և այլն:

Այսպիսով, պետք է փաստել, որ Հայաստանը 1920 թ. օգոստոսից արդեն ամբողջապես կայացած պետություն էր և վարում էր ինքնուրույն ներքին ու արտաքին քաղաքականություն և եթե չլիներ քեմալաբոլշևիկյան հակահայկական դաշինքը, ապա մեր երկիրը չէր ընկղմվի պատերազմի մեջ, չէր խորհրդայնացվի և հայ ժողովուրդը 70 տարի չէր հայտնվի անազատության մեջ: Եթե չլիներ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը, չէր հիմնադրվի Հայաստանի Հանրապետությունը, և եթե չլիներ այն, չէինք լինի նաև մենք: Այսինքն՝ չէր լինի 1990 թ. օգոստոսի 23-ը, չէր լինի մեր փառապանծ 1991 թ. Սեպտեմբեր 21-ը, ոչ էլ սեպտեմբերի 23-ը և չէր տոնվի նաև ՀՀ անկախության վերականգնման 25-ամյակը, 20-րդ դարավերջում հայ ժողովրդի ամենամեծ հաղթանակը՝ Արցախյան հերոսամարտի հետ մեկտեղ: Լավ, թե վատ, իր առավելություններով ու առկա թերություններով պետք է անկեղծորեն փաստել, որ 25 տարի է, ինչ մենք կրկին անկախ պետություն ունենք և դա արդեն ամեն ինչ արժե: Եվ ուրեմն կեցցե՛ 98-ամյա մեր Հանրապետությունը ու հավերժ փա՛ռք հերոսական հայ ժողովրդին, ինչպես նաև այն օտարազգիներին, որոնք զոհվեցին հանուն ազատ, անկախ և միացյալ Հայաստանի: Հիշում ենք ու խոնարհվում...

Մայքլ Ա. ԲԱԲԱՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Պատմության և իրավագիտության ֆակուլտետի
Իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող,
Երիտասարդ պատմագետների
միության նախագահ

ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ և ջանքերով, ինչպես նաև ՀՊՄՀ միջազգային կապերի վարչության աջակցությամբ այս տարվա հուլիսի մեկից մեկնարկել է ավստրիական, «Կայուն զբոսաշրջության զարգացումը Կովկասում» (SNC-mt) ծրագիրը: Ծրագրի նպատակը Հարավ-կովկասյան տարածաշրջանի (Հայաստան, Վրաստան), ինչպես նաև հարակից երկրների (ՌԴ, Իրան, Թուրքիա) գիտակրթական կենտրոնների միջև համագործակցության դաշտի ստեղծումն է: Ծրագրի իրականացումը ենթադրում է ՀՊՄՀ ուսանողների, դասախոսների, ինչպես նաև համապատասխան կառավարական մարմինների և զբոսաշրջային ոլորտի մասնագետների ներգրավում:

Վերոնշյալ ծրագրի հայաստանյան կողմի ղեկավար, ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոյեցյանը և ծրագրի ասիստենտ, նույն ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների թեկնածու Մարինե Մաթոսյանը ընթացիկ տարվա սեպտեմբերին աշխատանքային այցով Վրաստանում մասնակցեցին ծրագրի մեկնարկային համաժողովին, ինչպես նաև դասախոսություններով հանդես եկան ծրագրի շրջանակներում կազմակերպված միջազգային ամառային դպրոցում:

Հանդիպման հիմնական նպատակը հետագա համագործակցության ուղղությունները և անելիքները նախանշելն էր. կազմակերպել ՀՊՄՀ և գործընկեր համալսարանների դասախոսների վերապատրաստում, նորամուծություններ առարկայական ծրագրերում, առաջադրել ՀՊՄՀ ասպիրանտի թեկնածություն՝ Ավստրիայում ուսանելու նպատակով, համապատասխան կրթական կենտրոնների միջև փոխգործակցություն զբոսաշրջության բնագավառում, սերտ փոխհամագործակցություն ՀՀ համայնքների և ՀՊՄՀ դասախոսների և ուսանողների միջև՝ համայնքներում կայուն տուրիզմի զարգացումը խթանելու նպատակով:

Ծրագրի շրջանակներում զուգահեռ կազմակերպված ամառային դպրոցին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին ՀՊՄՀ-ից մրցույթով ընտրված երկու ուսանող՝ Ռոզա Չոբանյանը, Տիգրան Եղգիբարյանը, ինչպես նաև ասպիրանտ Գորիկ Ավետիսյանը:

Ամառային դպրոցի հիմնական նպատակն ուսանող աշխարհագրագետների ուշադրության բևեռումն էր Կովկասի զարգացմանը խոչընդոտող խնդիրների վրա և այն գաղափարների մշակումը, որոնք կարող են Կովկասը դարձնել նույնքան զարգացած և արգասաբեր տարածաշրջան, որքան եվրոպական Ալպերն է: Տեսապատկերներով հագեցած դասալսումներն ու բարձրակարգ մասնագետների կողմից տրամադրվող խորհրդատվությունը մեծապես նպաստեցին ուսանողների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանն ու նորարարական գաղափարների մտահղացմանը, իսկ բազմաբնույթ և ուսուցողական արշավներն ու այցելությունները մասնագիտական գիտելիքները գործնականում կիրառելու հրաշալի հնարավորություն ընձեռեցին:

Հայկական թիմը, դասախոսներ Աշոտ Խոյեցյանի, Արմեն Գևորգյանի և Մարինե Մաթոսյանի գլխավորությամբ, ներկայացավ պատվով և բարձր մակարդակով՝ կարևորելով նաև խաղաղությունն ու համերաշխությունը գիտակրթական նախաձեռնություններում:

« Ձեր գործունեությունը Դուք նվիրել եք երիտասարդների կրթության և դաստիարակության վեհ գործին: Ձեր այս առաքելության ճանապարհին միշտ որդեգրել եք նորը արարելու և զարգացնելու գաղափարներ: Լինելով մայրենիի նվիրյալ՝ ստեղծել եք ուսումնական գրականություն՝ աշակերտների և ուսանողների կրթությունը լավագույնս կազմակերպելու համար: Հայ մանուկը երկար տարիներ ուսանել է Ձեր հեղինակած դասագրքերով: Ձեր «Ձանգակ» այբբենարանը և մայրենիի դասագրքերն այսօր էլ սփյուռքահայ աշակերտին հորդորում են հայ մնալ, սիրել մայր հայրենիքը, ձևավորում են հայի տեսակին բնորոշ արժեքներ:

Դուք երկար տարիներ ամուր թելերով կապված եք Սփյուռքի գաղթօջախներին: Ձեր աշխատանքային այցելություններն այդ վայրեր նոր շունչ են հաղորդում մեր համերկրացիներին՝ հայրենիքի կարոտը փոխանցելու և հայապահպանության վեհ գործում»:

Մեջբերելով մի հատված մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մասնագիտական և մարդկային բարձր որակներով իր միջավայրը հարստացնող դասախոս, հրաշալի մայր ու սիրասուն տատիկ Ջուլիետա Գյուլամիրյանի հոբելյանական ուղերձից՝ ընթերողին ենք ներկայացնում նրա հետ անցկացրած մեր հարցազրույցը:

«Ուսանողներով լեցուն լսարանում ես ինձ պաշտպանված ու ապահով եմ զգում»,

– ասում է Ջուլիետա Գյուլամիրյանը

-Ինչի՞ց եք վախենում…

-Ընդհանրապես վախկոտ չեմ, կարող եմ ձեռնարկել համարձակ գործողություններ, գնալ համարձակ քայլերի, եթե վստահ եմ, որ արդարացի եմ: Բայց վախենում եմ դավաճանությունից, մտերիմ մարդուց հիասթափվելուց… Նման դեպքերում ինձ կողոպտված եմ զգում

-Ինչի՞ համար եք զղջում:

-Բնականաբար, թույլ տված սխալներիս համար զղջում եմ: Դե առանց սխալների չի լինում, և ես միշտ էլ ունեցել եմ սխալս խոստովանելու, դրա համար ներողություն խնդրելու ուժ:

Իմ կյանքի ամենամեծ սխալը համարում եմ ընդամենը երկու զավակ ունենալը. Տղաս ու աղջիկս պետք է եղբայրներ ու քույրեր ունենային…

-Ո՞ր տարիներն եք համարում Ձեր կյանքի ամենաերջանիկ հատվածը:

-Երբ երեխաներս դպրոցական էին, ու բոլորս միասին էինք նշում մեր ընտանիքի ավանդական տոները:

-Ձեր սիրած զբաղմունքը:

-Կարդալը, գրելը, ստեղծագործելը:

-Ձեր աշխատանքային գործունեության ամենալուսավոր կետը…

-Աշխատանքն ուսանողների հետ: Ուսանողներով լեցուն լսարանում ես ինձ չափազանց պաշտպանված ու ապահով եմ զգում: Ընդհանրապես երիտասարդությունը հրաշալի է:

-Ձեր ուժեղ կողմը…

-Աշխատասիրությունը, ես մաքսիմալիստ եմ:

-Ձեր թույլ կողմը…

-Չափից դուրս վստահությունն ու հավատը մարդկանց նկատմամբ:

-Ամենից շատ ինչի՞ց եք բավականություն ստանում:

-Երբ զգում եմ, որ պիտանի եմ: Երբ ինձ որևէ բան են հանձնարարում, ես անսահման ուրախանում եմ, մեծ սիրով եմ օգնության ձեռք մեկնում: Լավ է, երբ կան մարդիկ, ովքեր քեզ օգնում են, հոգում են քո մասին: Շատ ավելի լավ է, երբ դու ես հոգում որևէ մեկի հոգսը, երբ դու ես պետք գալիս մարդկանց:

-Ամենածանր հոգեվիճակը:

-Պարապությունը:

-Ձեր ամենամեծ ձեռքբերումը:

-Զավակներս:

-Ո՞ր գիրքը պետք է կարդա յուրաքանչյուր հայ:

-Ա. Ծառուկյանի «Կտակն է նահատակներու»:

-Ի՞նչ է հայրենասիրությունը Ձեզ համար:

-Հայրենասիրությունը ծնվում է թշնամու հանդեպ ծնված ատելությունից…

-Ամենասիրած հայ գրողը:

-Համո Սահյան, Պարույր Սևակ:

-Մանկության ամենաջերմ հիշողությունը:

-Մայրիկիս՝ ամանորյա գաթա թխելու արարողությունը մեր տանը, իր տարեկից հարևանուհիների հետ:

Զրուցեց Ս. ԱՍՐՅԱՆԸ

«Հայաստան՝ խոսող քարերի երկիր»

Մանկավարժական համալսարանի թանգարանի և IZI.Travel միջազգային կազմակերպության համագործակցության հիմքը դրվել է դեռևս 2013 թվականին՝ Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ-ի) 23-րդ վեհաժողովի շրջանակներում: Համալսարանի թանգարանը Հայաստանում առաջինը գործարկեց IZI.travel ծառայության աուդիոգիդ անվճար ծրագիրը: Երեք տարի անց այդ համագործակցությունը տվեց իր «պտուղները». 2016թ.-ի հուլիսի 3-9-ը Իտալիայի Միլան քաղաքում կայանալիք ԻԿՕՄ-ի 24-րդ վեհաժողովին ընդառաջ հայտարարված «Լավագույն աուդիոգիդ» մրցույթում մասնակից 30 երկրների շարքում սահմանված 3 մրցանակային տեղերից զբաղեցնելով 1-ին հորիզոնականը՝ վեհաժողովին մասնակցելու հնարավորություն ստացա: Մրցույթին ներկայացված աուդիոգիդը կրում է «Armenia the land of living stones» (Հայաստան՝ խոսող քարերի երկիր) խորագիրը, որը բացահայտում է Հայաստանի 23 հուշարձանների առեղծվածները, պատմում գեղատեսիլ բնության ու ազգային ավանդույթների, ճարտարապետական հորինվածքների մասին: Սրանից բացի թանգարանը հեղինակել է ևս 4 աուդիոպատմություն, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալ Երևանի թանգարաններին, մայրաքաղաքի հայտնի և անհայտ հուշարձաններին և Երևանի մետրոպոլիտենի պատմությանը:

Վեհաժողովի ընթացքում հանդես եկա զեկույցով՝ ներկայացնելով համալսարանի թանգարանի և IZI.travel-ի համատեղ աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունն ու մրցույթում հաղթած աշխատանքը: Հաղթող երկրների ներկայացուցիչները փորձի փոխանակման նպատակով գիտաժողովի աուդիոպատմության ստեղծման վերաբերյալ դասընթաց-վարժանք իրականացրին մասնակիցների համար:

Վեհաժողովին մասնակցությունն արդյունավետ եղավ հետագա նոր համագործակցությունների, ծրագրերի և հանդիպումների համար: Կատարված աշխատանքը մեծ ոգևորությամբ ընդունվեց, բարձր գնահատվեց վեհաժողովի մասնակիցների ու կազմակերպիչների կողմից՝ որակվելով որպես հսկայական ու հայրենանվեր քայլ՝ սեփական երկիրն ու բուհը ներկայացնելու գործում:

Մարիաննա ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
ՀՊՄՀ թանգարանի ավագ գիտաշխատող

Անհնար է սովորել առանց բնության

Ավանդույթի համաձայն այս տարի էլ Մանկավարժական համալսարանի ուսանողներն իրենց ուսումնաճանաչողական պրակտիկան անցկացրին Աղավնաձորի ուսումնական բազայում: Կենսաբանության, քիմիայի և աշխարահարգության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողների պրակտիկան կրում էր համալիր բնույթ: Ուսանողները պրակտիկայի ղեկավարներ, աշխարագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ Սիմա Դայանի և Վարդուհի Հովհաննիսյանի գլխավորությամբ հետազոտություններ են կատարել Մարմարիկի հովտում, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերին: Հետազոտություններն իրականացվել են և՛ ֆիզիկական աշխարհագրության ուղղությամբ, որը նպատակ ուներ ծանոթանալ բնությանն ու նրա առաձնահատկություններին, և՛ տնտեսական աշխարհագրության ուղղությամբ: «Պրակտիկայի ընթացքում կատարել ենք բազմաթիվ չափումներ, որոշել ենք ջրի ծախսը, արագությունը, ջերմաստիճանը, հողի ջերմաստիճանը, օդի խոնավությունը, տեղադիրքը, բարձրությունը՝ տեղանքի տարբեր վայրերում, և իրականացրել ենք համեմատություններ»,- ասաց Սիմա Դայան և հավելեց, որ այս տարվա պրակտիկան էականորեն տարբերվում է մյուսներից, քանզի ուսանողները հնարավորություն ունեն ամբիոնում վերջերս բացված լաբորատորիայի նորագույն և ժամանակակից գործիքներով իրականացնել վերոնշյալ հետազոտությունները:

Տնտեսական աշխարհագրության ուղղությամբ իրականացվող հետազոտությունների շրջանակում ուսանողները նաև սոցհարցումներ են իրականացրել հարակից գյուղերում՝ ամեն օրվա ավարտին իրենց օրագրերում ամփոփելով տվյալ օրվա կատարած հետազոտությունները ու վերլուծությունները:

«Բնությունն աշխարհագրագետի լաբորատորիան է, անհնար է սովորել առանց բնության: Նման պրակտիկաները շատ կարևոր են և նպաստում են գործնականում ուսանողի տեսական գիտելիքների ամրապնդմանը: Ուսանողներն ամեն ինչ կարող են սովորել տեսականորեն, սակայն այդ գիտելիքներն առանց պրակտիկայի ոչինչ է»,- ամփոփեց Սիմա Դայան:

Կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարո Քոչարյանն ու դասախոս Քնարիկ Ուզունյանն էլ ղեկավարում են կենսաբանության բաժնի 28 ուսանողի պրակտիկան: Ապագա կենսաբանները պրակտիկայի ընթացքում կատարում են ողնաշարավոր և անողնաշարավոր կենդանիների հավաքներ, կազմում հավաքածուներ, որոշիչների միջոցով որոշում դրանց տեսակային կազմերը, ինչպես նաև ծանոթանում կենդանիների տեղանքին և կենսակերպին: Ապագա բնաբանները տեսել և իրենց պրակտիկայի օրագրերում գրանցել են, դիտարկել են նաև Կարմիր գրքում գրանցված մի շարք կենդանատեսակներ և բուսատեսակներ:

«Շատ կարևոր է, որ բնագետ-կենսաբանը ոչ միայն լաբորատոր պայմաններում իրականացնի իր ուսումնասիրությունը, այլև բնության մեջ սովորի էքսկուրսիաներ կազմակերպել, որտեղից ի՛նչ գտնի և աշակերտին ի՛նչ ցուցադրի: Իսկ ազատ ժամանակ ուսանողները շփվում են միմյանց հետ, քննարկում աշխարգահրության և կենսաբանություն համագործակցությունը, սա էլ իր հերթին փորձի փոխանակման յուրօրինակ ձև է»,- ասում է Մարո Քոչարյանը:

Կենսաբանության մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Շահանե Թադևոսյանը գոհ է՝ պրակտիկան անցնում է հետաքրքիր և գերհագեցած ծրագրով. ամեն օր կատարում են բազմաբնույթ աշխատանքներ, բռնել են մի շարք կենդանիներ, պատրաստել են հավաքածուներ, ունեն նաև հերբարիումներ՝բույսերի հավաքածուներ, որոնցով մշակումներ են կատարում. «Այսօր ծաղիկների ծաղկափոշիներ ենք դիտարկել, պատրաստել կոլաժներ, նայել ենք, թե բույսի ծաղկափոշին ինչ տեսք ունի: Այս օրերի ընթացքում շատ բան սովորեցինք. այն, ինչ տեսական էր, որոշակիորեն անհասկանալի, իսկ բնության գրկում, պրակտիկայի շրջանակներում արված փորձերի արդյունքում առավել հասկանալի դարձավ և ամրապնդվեց»:

Աշխարհագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Սարգսյանն էլ անկեղծանում է՝ մինչ Աղավնաձորի ուսումնական բազայում հայտնվելը թերահավատ էր. կարծում էր ձանձրալի է լինելու, չէր պատկերացնում, թե ինչ են անելու: Անին խոստովանում է՝ դաշտային պրակտիկան, այս օրերին կատարած ուսումնասիրությունները, չափումներն ու կամերալ պայմաններում տարված աշխատանքներն օգնեցին հասկանալ, որ ճիշտ մասնագիտություն է ընտրել, իսկ «Մարալիկ գետի հովտի ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական բնութագրի կատարումը և Աղավնաձոր գյուղում անցկացրած սոցիալական հարցումները գյուղի մասին օգնեցին առավել ամբողջական դարձնել ունեցած գիտելիքները»:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ, ԻՄ ՍԵՐ»

Համալսարանական ընթերցասրահում սեպտեմբերի 14-ին անցկացվեց ՀՊՄՀ գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի «Հայաստա՛ն, իմ սեր» գրքի շնորհանդեսը:

Գիրքը արժևորեց Բանասիրական ֆակուլտետի դեկան, դոցենտ Աշոտ Գալստյանը, ով նկատեց այնտեղ «ուղենշված հետագիծը՝ Մաշտոցից մինչև 21-րդ դար»: Ըստ Ա. Գալստյանի՝ «ամեն բանաստեղծական տող այստեղ լույս է և ջերմություն»: Բանախոսը միաժամանակ ընդգծեց, որ յուրաքանչյուր հանդիպում գործընկերոջ՝ Տ. Պետրոսյանցի հետ «լեցուն է հաստատակամությամբ, չընկճվելու վճռականությամբ, վաղվա օրվա հավատով»:

Նախաձեռնության մտահղացումը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բանասիրական ֆակուլտետի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանինն էր, ով նաև հանդես եկավ գիրքը ներկայացնող զեկուցումով:

Զեկուցողն ընդգծեց, որ «հայրենասիրության թեման առ այսօր ուղեկցում է հայ գրականությանը»՝ մատնանշելով, որ դրա դրսևորումները հեթանոսական երկերից ու գողթան երգերից մինչև ոսկեդար ուղեկցել են հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքին»:

Ա. Դոլուխանյանն անդրադարձ արեց հայրենասիրական բանաստեղծությանը հայ իրականության մեջ մինչև նորօրյա դրսևորումները՝ Տիգրան Պետրոսյանցի ստեղծագործություններն արժևորելով այդ ամենի համապատկերում:

«Հայաստա՛ն, իմ սեր» քերթվածը և նույնանուն ժողովածուն տոգորված են հայրենիքի ապագայի նկատմամբ ունեցած խոր լավատեսությամբ»,- նշեց զեկուցողը՝ բարձրաձայնելով, որ հեղինակի բանաստեղծական աշխարհի խոստովանությունները հայրենասիրության ճշմարիտ դաս են, օգտակար դաս հատկապես նոր բարձրացող սերնդի համար:

Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Էդգար Ապրեսյանը գիրքը համարեց հայրենասիրությամբ առավել ամրապնդվելու առիթ, գիրք, որի«յուրաքանչյուր բառը, նախադասությունը ընթերցողին տանում են հայրենասիրության ճանապարհներով: …Հեղինակն իրեն համարում է սահմանին կանգնած զինվոր՝ իրեն համարելով սահմանապահ: Երկխոսության մեջ մտնելով Հայաստանի հետ՝ նա խոստանում է մնալ հայրենիքի սահմաններում…»:

Շնորհանդեսն ամփոփվեց երգի և ասմունքի հիանալի կատարումներով, որ ներկայացրին դասախոս Գոհար Մկանյանը, Բանասիրական ֆակուլտետի ուսանողներ Անի Ղալաչյանը և Կարինե Հովհաննիսյանը:

Տիգրան Պետրոսյանցին ջերմ խոսքեր հղեց գործընկեր, պրոֆեսոր Միքայել Մանուկյանը, իսկ գեներալ լեյտենանտ Արսեն Պիդանյանը պարգևատրեց «Տիգրան Մեծ» մեդալով:

Ներկաները մեծ ոգևորությամբ ունկնդրեցին Տ. Պետրոսյանցի և Լ. Հովհաննիսյանի հեղինակած «Զորավար» երգը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ԴԱՍ-ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Թանգարանային այցելությունները մշտական են դարձել դպրոցականների համար: Նոր ուսումնական տարվա մեկնարկի հետ վերսկսվում է աշակերտների հոսքը դեպի բուհական թանգարան, ուր հատկապես վերջիններին հետաքրքրում է Խաչատուր Աբովյանի եռաչափ տեսապատկերն ու խոսքը:

Այս անգամ Մանկավարժական համալսարանի թանգարան էին այցելել ՀՊՄՀ-ի №57 դպրոցի 4-րդ դասարանի սաները: Բուհի Սկզբնական կրթության ֆակուլտետի նախաձեռնությամբ մանկավարժականի կրտսեր հյուրերը թանգարանի աշխատակիցների ուղեկցությամբ մասնակցեցին «Հայ գրերի ստեղծումը» դաս-էքսկուրսիային, ապա շրջեցին թանգարանում, ծանոթացան բուհին, մեծ հետաքրքրությամբ «դիտեցին և ունկնդրեցին» Խաչատուր Աբովյանին:

Պլեներային առաջին դասը

Մանկավարժական համալսարանի № 57 հիմնական դպրոցի 1-ին բ դասարանի աշակերտները կերպարվեստի պլեներային առաջին դասն անցկացրին «Իմ քաղաքը» խորագրով: Աշակերտներն իրենց նկարներում պատկերեցին Երևանն՝ իր բոլոր գույներով:

Դասվար Տաթևիկ Աբրահամյանը գեղագիտական դաստիարակությունը շատ է կարևորում երեխայի

զարգացման գործում: Նա գտնում է, որ անհրաժեշտ է սկսել դեռ վաղ տարիքից՝ մանկապարտեզից, որովհետև այն երեխաների մեջ արթնացնում և ամրապնդում է սեր դեպի բնությունը: Դասապրոցեսի կազմակերպման ընթացքում միշտ հաշվի են առնվում երեխաների և նրանց ծնողների կարծիքներն ու առաջարկները:

Կերպարվեստի ոսուցչուհի Սյուզաննա Խաչիկյանը նկատում է՝ դեռ փոքր տարիքից պետք է զարգացնել երեխաների գեղագիտական ճաշակն ու ձևավորել բնության հանդեպ սեր: «Նման պլեներային էտյուդների ընթացքում երեխաները ծանոթանում են բնությանը, զգում նրա ամեն մասնիկը, հետո միայն այդ ամենը վերարտադրում են թղթի վրա»:

Աշակերտուհի Ժաննա Սարգսյանն ուշադրությամբ ծանոթանում է շրջապատին, այնուհետև սկսում է նկարել: «Իմ քաղաքը» խորագիրը Ժաննան շատ է հավանել, քանզի շատ է սիրում Երևանը:

«Նկարում պատկերել եմ շատրվաններ, ծաղիկներ

և խոտեր: Ես շատ եմ սիրում Երևանը և ցանկանում եմ մշտապես ապրել այստեղ»,- ասում է Ժաննան:

Էդմոնդ Հասրաթյանը մինչև դպրոց հաճախելը նկարչության խմբակ է այցելել, իսկ այսօր նկարել է ծիածան և ՀՀ դրոշը: Մեծ ոգևորությամբ նա պատմում է, թե եռագույնի գույներն ինչ են խորհրդանշում, իսկ նկարն էլ ավելի գեղեկացնելու և ուրախ դարձնելու համար գունազարդել է բազմագույն կետերով:

Տիգրան Մինասյանն էլ նկարել է ծառ, արև, երկինք. այդ ամենն իր պատկերացրած Երևանում կա: Երևան քաղաքում հատկապես սիրում է տան պատուհանից դուրս նայել, իսկ անձնից հետո միշտ հիանում է ծիածանով: Տիգրանը սիրում է նկարել և հաճույքով մասնակցում է նկարչության դասերին:

Զբոսայգում կազմակերպված պլեներային դասպարապմունքն ամփոփվեց հեքիաթի ընթերցմամբ, խաղերով և զբոսանքով:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Հատվող սահմաններ՝ բանավեճի միջոցով

Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի Բանավեճի ակումբի ղեկավար Լիանա Չոբանյանի և ժհ Erasmus ու ,Լրացուցիչ կրթության և բանավեճերի զարգացման կենտրոնիե միջազգային համագործակցության արդյունքում՝ ֆակուլտետի 1 ուսանող և ՀՊՄՀ-ի Հենակետային վարժարանի 4 աշակերտ մասնակցեցին ,Հատվող սահմաններ՝ երիտասարդության փոխազդեցություն բանավեճի միջոցովե CROSSING BOUNDARIES: YOUTH ENGAGEMENT THROUGH DEBATE ֆորումին:

Հենրիկ ՈՒՄՐՈՅԱՆ

Ծրագրի շրջանակներում մեզ մատուցված ոչ ֆորմալ կրթությունը նորություն էր ինձ համար և այն փոխեց իմ աշխարհայացքը կրթության բնագավառի վերաբերյալ:

Տարբեր մշակույթներ կրող երիտասարդները հատեցին սահմանները՝ բանավիճելու իրենց կարողություններն ի ցույց դնելով: Մինչև Լիտվա մեկնելս ,,բանավեճ,, ասվածի մասին պատկերացումներս բավականին աղքատ էին. դրանք սահմանափակվում էին դասարաններում մեր անկանոն և որպես կանոն քաոսի վերածվող բանավեճերի մասին իմ պատկերացումներով կամ հեռուստատեսությամբ ընդդիմության և իշխանության ներկայացուցիչների շատ հաճախ աբսուրդի վերածվող «բանավեճերով», սակայն ծրագրի շրջանակներում ես ծանոթացա բանավեճի ամենանուրբ տարրերին և հիմա էլ ոչ մի առիթ բաց չեմ թողնում այս բնագավառում կատարելագործվելու համար::

Աշոտ Թովմասյան

Ես այցելեցի մի նոր երկիր, սովորեցի բանավիճել և, իհարկե, ծանոթացա նոր մարդկանց հետ: Մենք այցելել էինք մի չքնաղ երկիր, որտեղ հիանալի համադրված է հինն ու նորը, բնությունն ու տեխնոլոգիան: Դա Լիտվան է:

Բանավիճելը մարդու կյանքի մի մասն է: Ոմանք բանավիճում են՝ անգամ առանց իմանալու թե ինչ է բանավեճը: Ես կարծում եմ ցանկացած մարդ պետք է կարողանա բանավիճել ոչ միայն այլ մարդկանց, այլև ինքն իր հետ: Բանավիճելը օգնում է շատ խնդիրների համար ճիշտ ելքեր գտնել:

Այս ֆորումի միջոցով ես նոր հմտություններ բացահայտեցի իմ մեջ…

Անի Ղուլյան

Մրցույթն ինձ տվեց բանավիճելու ունակություն, միտքս ձեռք բերեց ճկունություն, որի շնորհիվ ես հիմա շատ – շատ հարցեր ավելի հեշտ եմ լուծում: Մեկ այլ տեսանկյունից այն ինձ տվեց ծանոթություն ավելի քան 5 երկրների ներկայացուցիչների հետ: Եվ, իհարկե, նրանց հետ շփումն ու նրանց երկրների մշակույթին ծանոթանալը փոխեցին իմ աշխարհայացքը: Ես շնորհակալ եմ նման հնարավորության և նման մեծ փորձի համար:

Մարիամ Գասպարյան

Առաջին անգամ էր, որ մասնակցում էի այսպիսի մրցույթի ու հաղթելը մեծ զարմանք ու ուրախություն էր ինձ համար: Ուսումնական ճամփորդություն, որ թողեց հրաշալի հուշեր ու ընկերներ: Առաջին անգամ էի բանավիճում, իսկ մյուս երկրների պատվիրակները հիմնականում փորձառու բանավիճողներ էին, բայց միմյանց օգնելու ցանկությունն այնքան մեծ էր, որ բոլորս գրեթ հավասար էինք:

Մերի Ղարիբյան

Այս ճանապարհորդության շնորհիվ ես հասկացա, որ առավել քան ճիշտ մասնագիտություն եմ ընտրել: Մանկուց երազում էի դառնալ ուսուցիչ, ով երեխաների համար առաջին հերթին ընկեր և ուղղորդող կլինի: Կարծում եմ կարողացա լինել լավ ,ուսուցիչե և արդարացնել երեխաների սպասումները:

Լիանա Չոբանյան

«Հատվող սահմաններ՝ երիտասարդության փոխազդեցություն բանավեճի միջոցով» ֆորումը համարում եմ հաջողված, կարծում եմ առաջադրված խնդիրները լուծվել են, որոնք էին՝ ոչ ֆորմալ կրթության իրականացում, լեզուների իմացության ամրապնդում, քաղաքացիական հասարակության ստեղծում, արդարամիտ, իր իրավունքներին տեր քաղաքացու ձևավորում, մշակութային և կրթական փոխազդեցություն, բանավեճի նրբությունների տիրապետում:

Պլեներային ցուցահանդես Լիտվայում

Սեպտեմբերի 5-ից 15-ը Լիտվայում անցկացվեց «Նիդա 2016» միջազգային պլեները, որին մասնակցում էին մի շարք երկրներից հրավիրված նկարիչներ: Պլեների նպատակն էր տարբեր երկրների մշակույթների մերձեցումը:

Պլեների աշխատանքներին հրավիրվել էր նաև մեր համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ, կերպարվեստի և գծագրության բաժն 4-րդ կուրսի ուսանողուհի Զարուհի Խաչատրյանը: Ի դեպ, միջազգային պլեներին մասնակցող նկարիչների մեջ Զարուհին միակ ուսանողն էր, ով Հայաստանին նվիրված պլեներային աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրեց Մանկավարժական համալսարանում ապագա նկարիչների հետ տարվող միջոցառումների, նրանց աշխատանքների ցուցահանդեսների և Հայաստանի պատմամշակութային վայրերի մասին պատմող հոլովակ:

Զարուհին Լիտվայում մասնակցեց պլեներային երկու ցուցահանդեսի, որը նոր շրջադարձ եղավ ապագա նկարչուհու մասնագիտական կայացման համար:

Ուսանողական ամառ

ԵՌԱԳՈՒՅՆԸ՝ ՄԵԿ ՏԱՆԻՔԻ ՆԵՐՔՈ

Եթե մի փոքր անկեղծանամ, ապա կասեմ, որ «Բազե»-ին մասնակցելը մի փոքրիկ երազանք էր մինչ այն պահը, երբ ինձ զանգահարեցին և հրավիրեցին «Երևան 1» ջոկատ: Փոքր-ինչ տխրեցի, որ իմ մարզի կամ բուհի ջոկատից չեմ լինելու, բայց հետո հասկացա, որ կապ չունի, թե որ ջոկատից կամ որ ճակատից ես, կարևորն այն է, որ աշխարհի տարբեր անկյուններից հավաքվել էինք մի գաղափարի շուրջ ու կազմել եռագույն. բոլորս էլ ՀԱՅ ենք:

Ես «Բազե 2016» համահայկական հավաքին մասնակցել եմ որպես «նկարիչ-դիզայներ», եղել եմ «Երևան 1» ջոկատի անդամ կապույտ ճակատում: Ներճակատային նկարչության մրցույթում զբաղեցրել եմ 3-րդ հորիզոնականը, անցնելով եզրափակիչ փուլ, արդեն միջճակատային մրցույթում նկարս գնահատվեց բարձր միավորներով, և մենք հաղթեցինք: «Բազե նկարիչ» անվանակարգում հաղթեց կապույտ ճակատը:

Միաժամանակ ջոկատի կազմում մասնակցել եմ «բրեյն ռինգ» ինտելեկտուալ մրցույթին, որտեղ զբաղեցրել ենք 2-րդ հորիզոնականը: Ընթացքում նաև հետևում էի նորածևության ընթացիկ աշխատանքներին: Հավելեմ, որ մեր «Երևան 1» ջոկատը ճանաչվեց լավագույն ջոկատ:

Օրերը «Բազե»-ում անցնում էին հագեցած, մի պահ նույնիսկ ինձ զգում էի բանակում՝ առավոտյան՝ շարային, «Բազե»-ի հիմն, ճաշարան, մեկը մյուսին հաջորդող մրցույթներ և այսպես շարունակ մեկ շաբաթ:

Բոլորս եռագույն կազմած ապրում էինք նույն տանիքի տակ. արթնանում, խոսում, երգում, պարում, նկարում և մրցում էինք հայերեն:

Յոթ օրերի ընթացքում նաև հանդիպումներ ունեցանք Հայաստանի նախագահի և նախարարների հետ:

Կարծում եմ նման հավաքները մեր երկրում պետք է շատ կազմակերպել, որովհետև հրաշալի առիթ է մրցել միմյանց հետ և բացահայտել նորանոր տաղանդներ:

Դեռ երկար կհիշեմ իմ կյանքի այն յոթ օրերը, որոնք ապրել եմ «Բազե»-ի գրկում: «Բազե»-ի ամեն մի իմաստալից օր խորը հետք է թողել իմ հիշողության մեջ, և ես վստահ կարող եմ ասել, որ նոր գիտելիքներից, պատվոգրերից ու մեդալներից առավել իմ ամենամեծ ձեռքբերումն այսօրվա իմ Բազեական ընկերներն են:

Բազեն ինձ նոր թևեր տվեց՝ ճախրելու դեպի անկախ ապագա…..

Հերիքնազ ԽԱՉԻԿՅԱՆ
ՀՊՄՀ ուսանող

«Քառորդ դար. անկախության ճանապարհին»

Հայաստանի Հանրապետության Անկախության 25-ամյակի առթիվ Մանկավարժական համալսանի Կուլտուրայի ֆակուլտետի ճեմասրահում ներկայացվեց լուսանկարների ցուցահանդես՝ «Քառորդ դար. անկախության ճանապարհին» թեմայով: 2-4-րդ կուրսերի ուսանողները 100-ից ավելի նկարներում ներկայացրել էին իրենց պատկերացրած ու տեսած անկախությունը:

Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի վարիչ Ռուբեն Երզնկյանն այս ցուցահանդեսը մյուսներից առանձնացնում է, քանզի այստեղ միմիայն անկախությանը նվիրված լուսանկարներ են ներկայացված:

«Ցուցահանդեսը Անկախության 25-ամյակի առթիվ

միջոցառումների ամփոփումն է. մինչ այդ ֆակուլտետում ցուցադրվել է Գառնիկ Կարապետյանի «Իմ Հայաստան» ֆիլմը, այնուհետև Սարդարապատում անցկացվել է արտագնա դաս: Ընհանուր առմամբ լուսանկարները լավն են, հետաքրքիր մոտեցումներ կան»,- ասաց Երզնկյանը: Նա ընդգծեց նաև, որ ցուցահանդեսից ցուցահանդես ուսանողների մոտ նկատելի է մասնագիտական փորձառության աճ, իսկ ցուցահանդեսի փակումից հետո այն կամփոփվի, և լավագույնները կստանան խրախուսական նվերներ: Ցուցահանդեսը բաց կլինի մինչև հոկտեմբերի 7-ը:

ՆՈՐ ԳՐՔԵՐ

«ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ»

Գրքում համակողմանի քննության են առնվում արդիականացման (մոդեռնիզացիա) տեսության և պրակտիկային վերաբերող հիմնախնդիրները արդի քաղաքագիտական խոսույթում: Առանձնակի ուշադրության են արժանանում արդիականացման դրսևորումները տարբեր քաղաքական վարչակարգերում տեղի ունեցող ձևափոխումների տեսանկյունից, որոնք ունեն քաղաքակրթական տարբեր համատեքստ: Որպես հետազոտության արդյունք՝ առաջարկվում է արդիականացման այլընտրանքներ Հայաստանի Հանրապետության համար:

Գիրքը կարող է օգտակար լինել արդիականացման տեսական և գործնական հիմնախնդիրներով հետաքրքրվողների, ուսանողների, ինչպես նաև մասնագետների լայն շրջանակի համար և կարող է ծառայել ՀՀ արդիականացմանը:



«20-21-րդ դարերի նորարար մանկավարժները»,

Տ. Ա Մասումով, Յա. Ա. Մաքսիմով և ուրիշներ

Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկի գիտահետազոտական կենտրոնը վերջերս լույս է ընծայել «20-21-րդ դարերի նորարար մանկավարժները» հանրագիտարանը: Նրանում տեղ են գտել ռուսաստանյան և արտերկրների 136 նորարար մանկավարժների կենսագրական հոդվածներ, որոնք մեծ ավանդ ունեն նորագույն կրթության և մանկավարժության զարգացման գործում:

Հանրագիտարանը հրատարակության է պատրաստվել 2016 թվականին, հեղինակային կոլեկտիվի և Գիտական նորարարական կենտրոնի ուսումնասիրությունների հիման վրա:

Հաճելի է տեղեկանալ, որ հանրագիտարանում զետեղվել է նաև նորարարական կրթության ու մանկավարժության ոլորտում ՀՊՄՀ մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտ Սվետլանա Միքայելի Մինասյանի գործունեությունը ներկայացնող էջ:

ՀՊՄՀ մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Սվետլանա Մինասյանը Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի պրոֆեսոր է, ՌԴ մի շարք հեղինակավոր ակադեմիաների և ասոցիացիաների անդամ: Հանրագիտարանում ներկայացվել է Ս. Մինասյանի շուրջ 100 գիտական հոդվածների, ուսումնական, ուսումնամեթոդական դասագրքերի և ձեռնարկների, աշխարհի տարբեր երկրներում իրականացրած հեղինակային կրթական նախագծերի, ինչպես նաև պարգևների մասին տեղեկություններ:

Տիգրան Թանգամյան. «Կենսաբանություն»

Հրատարակվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Տ.Վ.Թանգամյանի կողմից կազմած «Կենսաբանություն» (ուսուցիչների, աշակերտների և բուհ ընդունվողների համար) ուսումնական ձեռնարկը:

Ձեռնարկն իր ձևի մեջ առանձնահատուկ է, կազմված է բացատրական բառարան, կենսաբանների և բնագետների տողանի, նշանավոր տարեթվեր և մեթոդական ցուցումներ բաժիններից: Այն իր մեջ ներառում է ավելի քան 1800 կենսաբանական հասկացությունների և եզրերի մատչելի բացատրություններ, որոնց մեծ մասը զուգորդվում է համապատասխան մեթոդական ցուցումներով՝ աղյուսակներով, գծապատկերներով և նկարներով:

Ուշագրավ է մեծ կենսաբանների և բնագետների կենսագրությունների բաժինը, ինչն ունի ուսուցողական և դաստիարակչական մեծ նշանակություն:

Տ. Թանգամյանի կողմից կազմած ձեռնարկի անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում:

Ձեռնարկն օգտակար կարող է լինել նաև բակալավրիատի ուսանողների և մագիստրոսների համար՝ բարձր որակավորում ստանալու և ավարտական քննություններին նախապատրաստվելու իմաստով: Ձեռնարկը խրախուսելի է նաև սովորողների ինքնուրույն աշխատանքը խթանելու համար:

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը չի վաճառվում:
Հանձնված է տպագրության 29.09. 2016 թ.